

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Քաղաքացիական իրավունքի ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝	1903/B08 <<Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունք>>
Որակավորման աստիճան՝	բակալավրի կրթական աստիճան
Կազմեց՝	իրավ. գիտ. թեկնածու – Լ. Մելիքջանյան

Ծրագրի ներածություն

1903/B08 Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունք (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (դասախոսություն՝ 24, սեմինար՝ 8, ինքնուրույն աշխատանք՝ 28)
5-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրները, քաղաքացիական իրավահարաբերություններին քաղաքացիների և իրավաբանական անձանց մասնակցելու ազգային իրավական մոտեցումները, արտասահմանյան երկրների ներկայացուցչության, ժառանգման և պարտավորական իրավունքի առանձնահատկությունները:

Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կունենա՝

(գիտելիք և իմացություն)

- արտասահմանյան երկրների տարբեր քաղաքացիաիրավական համակարգերից,
- սեփականության իրավունքի կարգավորման տարբեր իրավական մոտեցումներից,
- արտասահմանյան երկրների պարտավորական իրավունքի առանձնահատկություններից,
- ուսումնասիրվող երկրների ժառանգման իրավունքի վերաբերյալ

Ունակ կլինի՝

(բուն մասնագիտական ունակություններ)

- շահագրգռված անձանց անհրաժեշտ իրավական օգնություն ցուցաբերել արտասահմանյան երկրներում քաղաքացիաիրավական կարգավորման առանձնահատկությունների մասին,
- կատարել տարբեր իրավական համակարգերի կարգավորման համեմատական վերլուծություն և վերհանել հայրենական օրենսդրական բացերն ու ներկայացնել կատարելագործման մեխանիզմներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված է 2 ընթացիկ բանավոր ստուգում, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ստուգման ընթացքում յուրաքանչյուր ուսանողի տրվում է 3 հարց, որոնք կազմվում են նախօրոք ուսանողներին տրված հարցաշարից: Յուրաքանչյուր հարց գնահատվում է 3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Առաջին ընթացիկ քննությունն ընդգրկում է 1-ից 5-րդ թեմաները, իսկ **երկրորդ ընթացիկ քննությունն** ընդգրկում է 6-ից 8-րդ թեմաները:

Դասընթացի նկարագրություն, բովանդակություն

Թեմա 1. Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի ընդհանուր բնութագիրը

(2 ժամ դասախոսություն)

1. Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի ուսումնասիրման անհրաժեշտությունը: Մասնավոր իրավունքի նորմերի միջազգային ունիֆիկացիայի նշանակությունը առանձին պետությունների քաղաքացիաիրավական կարգավորման մեջ: 2. Քաղաքացիական և առևտրային իրավունքը որպես մասնավոր իրավունքի առանձին ճյուղ: Մասնավոր իրավունքի դուալիզմ: 3. Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի սկզբունքները և զարգացման հիմնական միտումները: 4. Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի համակարգը:

Հարցեր 1-4 Անցկացվում է ներածական դասախոսություն՝ ուսանողների հիմնական ուշադրությունը սևեռելով արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի ուսումնասիրության և միջազգային ինտեգրման գործընթացին համահունչ յուրաքանչյուր իրավաբանի արտասահմանյան իրավունքի վերաբերյալ որոշակի գիտելիքների անհրաժեշտության վրա: Ուսանողներին տրամադրվում են առարկայի դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները:

Թեմա 2. Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրները

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրների ընդհանուր բնութագիրը: Քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրների փոխհարաբերակցության առանձնահատկություններն ու զարգացման միտումները: 2. Ֆրանսիայի Քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրները: 3. Գերմանիայի Քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրները: 4. Անգլիայի Քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրները: Նախադեպային իրավունքի առանձնահատկությունները: Ընդհանուր և արդարության իրավունք: 5. ԱՄՆ-ի Քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրները: Առանձին նահանգների օրենսդրության առանձնահատկությունները: 6. Շվեյցարիայի Քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրները: 7. Միջազգային ունիֆիկացիայի դերը քաղաքացիական և առևտրային իրավունքում:

Հարցեր 1-7 - Անցկացվում է դասախոսություն՝ քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ տրամադրված դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ):

Հարցեր 2-6 - Մեմինար պարապմունք - ուսանողները համեմատականներ են անցկացնում իրավական տարբեր համակարգերի միջև, համատեղ քննարկումների արդյունքում ներկայացնում դրանցից յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները:

Հարցեր 2-3- ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (աղբյուրը՝ Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգիրք, Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրք):

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Гражданское и торговое право капиталистических стран. М., 1980
2. Гражданское и торговое право капиталистических государств /Под ред. Р.Л. Нарышкиной/. М.: Международные отношения, 1983
3. Давид Р. Основные правовые системы современности / Пер. с фр. – М.: Прогресс, 1988
4. Шапп Я. Основы гражданского права Германии. Учебник. Пер. с нем. М.,1996.
5. Германское право. Ч. 3. Пер. с нем. М.: Статут, 1999.
6. Европейское право. Учебник для вузов. /Под общ.ред Л.М. Энтина/. М.: НОРМА, 2000
7. Романов А.К. Правовая система Англии: Учеб. пособие. М.: Дело, 2000
8. Жалинский А., Рарихт А. Введение в немецкое право. М.: Спарк, 2001
9. Проблемы гражданского и предпринимательского права Германии. М., 2001
10. Гражданское и торговое право зарубежных государств. /Под ред. А.С. Комарова и Е.С.Васильева/. М., 2004
11. Гражданское и торговое право зарубежных стран: Учебное пособие / Под общей редакцией В.В. Безбаха и В.К. Пучинского/. М.: МЦФЭР, 2004

Թեմա 3. Քաղաքացիները որպես քաղաքացիական և առևտրային իրավունքի սուբյեկտներ

(2 ժամ դասախոսություն)

1. Ֆիզիկական անձը որպես քաղաքացիակն և առևտրային իրավունքի սուբյեկտ: 2. Ֆիզիկական անձի իրավունակությունը: Դեյիկտունակություն: Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու և մահացած հայտարարելու առանձնահատկությունները արտասահմանյան տարբեր երկրներում: 3. Քաղաքացիների գործունակությունը:

Գործունակության տեսակները առանձին երկրներում: Անգործունակ և սահմանափակ գործունակ անձանց կողմից կնքվող գործարքներ: 4. Անհատ ձեռնարկատերերի իրավական կարգավիճակը:

Հարցեր 1-4 Անցկացվում է ներածական դասախոսություն, այնուհետև հանձնարարվում է ինքնուրույն աշխատանք: Ուսանողները համեմատականներ են անցկացնում ՀՀ և արտասահմանյան ուսումնասիրվող երկրների քաղաքացիների գործունակությանը ներկայացվող մոտեցումների միջև:

Հարցեր 2-3- ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն՝ համեմատականներ անցկացնելով ՀՀ և արտասահմանյան իրավական կարգավորումների միջև (աղբյուրը՝ դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք):

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Гражданское и торговое право зарубежных стран. /Под ред. М.И.Кулагина/. М., 1996г.
2. Гражданское и торговое право зарубежных государств. /Под ред. А.С. Комарова и Е.С.Васильева/. М., 2004
3. Гражданское и торговое право зарубежных стран: Учебное пособие / Под общей редакцией В.В. Безбаха и В.К. Пучинского/. М.: МИФЭР, 2004
4. Пятин С.Ю. Гражданское и торговое право зарубежных стран /Учебное пособие/. М., 2008
5. Зенин И.А. Гражданское и торговое право зарубежных стран: учеб. пособие. М., 2008

Թեմա 4. Իրավաբանական անձեր

(2 ժամ դասախոսություն)

1. Իրավաբանական անձի հասկացությունը և հիմնական հատկանիշները: 2. Իրավաբանական անձանց ստեղծման կարգն ու եղանակները: 3. Իրավաբանակ անձանց իրավունակությունն ու գործունակությունը: 4. Արտասահմանյան երկրներում իրավաբանական անձանց տեսակների առանձնահատկությունները:

Հարցեր 1-4 Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Гражданское и торговое право зарубежных стран: Учебное пособие / Под общей редакцией В.В. Безбаха и В.К. Пучинского/. М.: МЦФЭР, 2004
2. Гражданское и торговое право зарубежных государств. /Под ред. А.С. Комарова и Е.С.Васильева/. М., 2004
3. Пятин С.Ю. Гражданское и торговое право зарубежных стран /Учебное пособие/. М., 2008
4. Зенин И.А. Гражданское и торговое право зарубежных стран: учеб. пособие. М., 2008

Թեմա 5. Ներկայացուցչություն (2 ժամ դասախոսություն)

1. Ներկայացուցչության հասկացությունը և տեսակները: Քաղաքացիական և առևտրային ներկայացուցչություն, դրանց տեսակները: Ներկայացուցչության հիմքերը: Միջնորդություն: 2. Չլիազորված կամ լիազորությունը գերազանցած ներկայացուցչի կատարած իրավաբանական գործողությունների հետևանքները: 3. Առևտրային կազմակերպության ծառայողների կողմից իրականացվող ներկայացուցչություն: 4. Առևտրային գործակալների կողմից իրականացվող ներկայացուցչություն: 5. Ներկայացուցչության առանձնահատկությունները անգլո-ամերիկյան համակարգում:

Հարցեր 1-5 Անցկացվում է դասախոսություն: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված, և 2-4 հարցերի վերաբերյալ կազմակերպվում է քննարկում, ուսանողները արտահայտում են իրենց հիմնավորված մտեցումները առավել նախընտրելի օրենսդրական կարգավորման առթիվ:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Европейское право. Учебник для вузов. /Под общ.ред Л.М. Энтина/. М.: НОРМА, 2000
2. Романов А.К. Правовая система Англии: Учеб. пособие. М.: Дело, 2000
3. Марченко М.Н. Курс сравнительного правоведения. М., 2002
4. Гражданское и торговое право зарубежных стран: Учебное пособие / Под общей редакцией В.В. Безбаха и В.К. Пучинского/. М.: МЦФЭР, 2004
5. Гражданское и торговое право зарубежных государств. /Под ред. А.С. Комарова и Е.С.Васильева/. М., 2004

Թեմա 6. Արտասահմանյան երկրների իրային իրավունքները (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Իրային իրավունքների հասկացությունները և տեսակները: Իրային իրավունքի օբյեկտները: 2. Սեփականության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը: Սեփականության իրավունքի կարգավորման առկա էական առանձնահատկությունները արտասահմանյան երկրներում: 3. Սեփականության իրավունքի ձեռք բերման հիմքերն ու եղանակները: Գրանց առանձնահատկությունները առանձին երկրներում: 4. Սեփականության իրավունքի պաշտպանությունը: 5. Սերվիտուտային իրավունք: 6. Հավատարմագրային սեփականությունը անգլո-ամերիկյան իրավունքում և դրա ազդեցությունը այլ իրավական համակարգերի վրա: Հավատարմագրային սեփականության հիմնական տեսակները

Հարցեր 1-6 - Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Այնուհետև հանձնարարվում է ինքնուրույն աշխատանք, ուսանողները վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են հաջորդ դասախոսությանը:

Հարցեր 1,3,5 - Սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկմամբ:

Հարց 2-3 –ինքնուրույն աշխատանք (պահանջվող նյութը՝ դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ):

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Основные институты гражданского права зарубежных стран. Сравнительно-правовое исследование. Руководитель авторского коллектива – доктор юридических наук В.В. Залесский. М., 2000
2. Марченко М.Н. Курс сравнительного правоведения. М., 2002
3. Осакве К. Сравнительное правоведение в схемах: Общая и Особенная части: Учеб.-практ. пособие. 2-е изд., перераб. и доп. – М.: Дело, 2002
4. Гражданское и торговое право зарубежных стран: Учебное пособие / Под общей редакцией В.В. Безбаха и В.К. Пучинского/. М.: МЦФЭР, 2004
5. Гражданское и торговое право зарубежных государств. /Под ред. А.С. Комарова и Е.С.Васильева/. М., 2004
6. Пятин С.Ю. Гражданское и торговое право зарубежных стран /Учебное пособие/. М., 2008
7. Зенин И.А. Гражданское и торговое право зарубежных стран: учеб. пособие. М., 2008

Թեմա 7. Արտասահմանյան երկրների ժառանգման իրավունք

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Ժառանգման իրավունքի ընդհանուր բնութագրությունը: 2. Ժառանգում ըստ օրենքի: 3. Ժառանգում ըստ կտակի:

Հարցեր 1-3 - Անցկացվում է դասախոսություն՝ սխեմաների միջոցով յուրաքանչյուր երկրի ժառանգման իրավունքի առանձնահատկությունների ներկայացմամբ:

Հարցեր 1-3 - Անցկացվում է սեմինար պարապմունք: Ուսանողները քննարկում են ժառանգման առկա համակարգերի տարբերությունները:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Гражданское и торговое право зарубежных стран. /Под ред. М.И.Кулагина/. М., 1996г.
2. Άάάέά Δ., Αί ὈὈδὰ-Νῖ εἰ ἰçè Ê. Î ñî îáí úá î δαάî áúá ñèñòàì ù ñî áδàì áí í î ñòè. Î ., 1997
3. Основные институты гражданского права зарубежных стран. Сравнительно-правовое исследование. Руководитель авторского коллектива – доктор юридических наук В.В. Залесский. М., 2000
4. Марченко М.Н. Курс сравнительного правоведения. М., 2002
5. Гражданское и торговое право зарубежных стран: Учебное пособие / Под общей редакцией В.В. Безбаха и В.К. Пучинского/. М.: МЦФЭР, 2004
6. Гражданское и торговое право зарубежных государств. /Под ред. А.С. Комарова и Е.С.Васильева/. М., 2004
7. Пятин С.Ю. Гражданское и торговое право зарубежных стран /Учебное пособие/. М., 2008
8. Зенин И.А. Гражданское и торговое право зарубежных стран: учеб. пособие. М., 2008

Թեմա 8. Արտասահմանյան երկրների պարտավորական իրավունքի առանձնահատկությունները

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Պարտավորության հասկացությունը և դրա տեսակները: Բաժանելի և անբաժանելի պարտավորություններ, ենթակա պարտավորություններ, բնական պարտավորություններ, դրամական պարտավորություններ: Պարտավորությունների ծագման հիմքերը: 2. Պարտավորության սուբյեկտները: Անձանց բազմաթիվությունը և փոփոխելիությունը պարտավորության մեջ: 3. Պայմանագրի հասկացությունը և տեսակները: Որոշակի և ռիսկային պայմանագրեր, միանալու և տիպային պայմանագրեր, կառավարելի պայմանագրեր, ձևական և հստակ պայմանագիր, դատարանի որոշմամբ պայմանագիր, կատարված և կատարվելիք պայմանագրեր: 4. Պայմանագրի կնքումը: Ակցեպտի և օֆերտայի առանձնահատկությունները առանձին երկրներում: 5. Պայմանագրի բովանդակությունը: Պայմանագրի պայմանների տեսակները և դրանց առանձնահատկությունը անզրո-ամերիկյան իրավունքում: 6 Պայմանագրի վավերության պայմանները:

Հարցեր 1- 6 - Անցկացվում է դասախոսություն՝ ՀՀ և արտասահմանյան երկրների պարտավորական իրավունքի համեմատականների անցկացմամբ:

Հարցեր 1- 6 - Անցկացվում է սեմինար պարապմունք: Ուսանողները քննարկում են տարբեր երկրներում պարտավորական իրավունքների բնորոշ առանձնահատկությունները՝ համեմատականներ անցկացնելով ՀՀ պարտավորական իրավունքի հետ:

Հարցեր 2-3, 4, 6- ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն՝ համեմատականներ անցկացնելով ՀՀ և արտասահմանյան իրավական կարգավորումների միջև (աղբյուրը՝ դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք):

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի դասախոսությունների էլեկտրոնային տարբերակ, 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Договор аренды-продажи в странах общего права // Социальное развитие и право. М., 1980
2. Цвайгерт К., Катц Х. Введение в сравнительное правоведение в сфере частного права: В 2-х тт. – Том 2. Договор, неосновательное обогащение, деликт: Пер. с нем. М., 2000
3. Европейское право. Учебник для вузов. /Под общ.ред Л.М. Энтина/. М.: НОРМА, 2000
4. Проблемы гражданского и предпринимательского права Германии. М., 2001
5. Гражданское и торговое право зарубежных стран: Учебное пособие / Под общей редакцией В.В. Безбаха и В.К. Пучинского/. М.: МЦФЭР, 2004
6. Гражданское и торговое право зарубежных государств. /Под ред. А.С. Комарова и Е.С.Васильева/. М., 2004
7. Зенин И.А. Гражданское и торговое право зарубежных стран: учеб. пособие. М., 2008

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՀԱՐՑԱՇԱՐ

1-ին ընթացիկ ստուգման Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

1. Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի ուսումնասիրման անհրաժեշտությունը
2. Քաղաքացիական իրավունք և մասնավոր իրավունք
3. Մասնավոր իրավունքի դուալիզմ
4. Քաղաքացիական և առևտրային իրավունքի զարգացման միտումները
5. Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի առարկայի համակարգը
6. Արտասահմանյան երկրների քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրները
7. Ֆրանսիայի քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրները
8. Գերմանիայի քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրները
9. Դատական նախադեպը Անգլիայում
10. Ընդհանուր և արդարության իրավունք
11. Նախադեպի թերություններն ու առավելությունները
12. Նախադեպի որոշման էությունն ու առկա տեսությունները
13. ԱՄՆ-ի քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրները
14. Շվեյցարիայի քաղաքացիական և առևտրային իրավունքի աղբյուրները
15. Ֆիզիկական անձանց իրավասուբյեկտություն: Գերմանիայի օրենսդրության առանձնահատկությունը
16. Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու և մահացած հայտարարելու ինստիտուտը Ֆրանսիայի օրենսդրությամբ
17. Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու և մահացած հայտարարելու ինստիտուտը Գերմանիայի օրենսդրությամբ
18. Քաղաքացու գործունակությունը Ֆրանսիայում
19. Քաղաքացու գործունակությունը Գերմանիայում
20. Անչափահասների կողմից կնքվող գործարքները Անգլիայում
21. Իրավաբանական անձինք: Հիմնական հատկությունները
22. Իրավաբանական անձանց առկա տեսությունները
23. Իրավաբանական անձանց տեսակները: Ստեղծման ձևերը
24. Ներկայացուցչություն: Տեսակները
25. Ներկայացուցչության առանձնահատկությունները տարբեր երկրներում
26. Առևտրային ներկայացուցչություն: Առևտրային ներկայացուցչության տեսակները: Միջնորդ
27. Ձեռնարկության ծառայողների կողմից իրականացվող ներկայացուցչություն
28. Ներկայացուցչություն գործակալների կողմից
29. Ներկայացուցչություն Անգլիայում

2-րդ ընթացիկ ստուգման Հ Ա Ր Յ Ա Շ Ա Ր

1. Իրային իրավունքներ, դրանց առանձնահատկությունները
2. Իրային իրավունքի օբյեկտները
3. Անշարժ և շարժական իրեր, առանձնահատկությունները տարբեր երկրներում
4. Սեփականության իրավունքի կարգավորման ժամանակակից առանձնահատկությունները
5. Հողի սեփականատիրոջ իրավագործությունների սահմանափակումները
6. Հողի սեփականատիրոջ իրավագործությունների սահմանափակման առանձնահատկությունները Անգլիայում
7. Սերվիտուտ
8. Սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերը
9. Ձեռքբերման վաղեմությունը տարբեր երկրներում
10. Սեփականության ձեռքբերման ածանցական եղանակները
11. Սահմանափակ իրային իրավունքներ
12. Հավատարմագրային սեփականությունը անգլո-ամերիկյան իրավունքում
13. Հավատարմագրային սեփականության սուբյեկտները և նշանակությունը
14. Հավատարմագրային սեփականության տեսակները
15. Ժառանգման իրավունքի ընդհանուր բնութագիրը
16. Ժառանգում ըստ կտակի: Կտակային գործունակություն
17. Կտակի տեսակները
18. Երկու և ավելի անձանց կտակներ: Ժառանգման պայմանագիր
19. Ժառանգի ենթանշանակում
20. Պարտադիր բաժիններ և ժառանգներ
21. Պարտադիր բաժնի առանձնահատկությունները անգլո-ամերիկյան համակարգում
22. Անվավեր կտակներ
23. Ըստ օրենքի ժառանգում, հիմնական համակարգերը
24. Ըստ օրենքի ժառանգումը Ֆրանսիայում
25. Ըստ օրենքի ժառանգումը Գերմանիայում
26. Ըստ օրենքի ժառանգումը Շվեյցարիայում
27. Ըստ օրենքի ժառանգումը Անգլիայում
28. Ըստ օրենքի ժառանգումը ԱՄՆ-ում
29. Ժառանգության ընդունման առանձնահատկությունները
30. Պարտավորության հասկացությունը և տեսակները
31. Դրամական պարտավորություններ
32. Պայմանագիրն արտասահմանյան երկրներում